Կարծիք

Գարեգին Սահակի Թումանյանի

«Կիմերները և սկյութները Հայկական լեռնաշխարհի արևելքում

(ըստ հնագիտական տվյալների)»

Է.00.03 «Հնագիտություն» մասնագիտությամբ դոկտորական ատենախոսության

վերաբերյալ

Հայկական լեռնաշխարհի պատմության համար Ք.ա. 7-րդ դ-ը չափազանց կարևոր, շրջադարձային փուլ է: Այն սկզբնապես նշանավորվում է լեռնաշխարհում իր տիրապետությունը հաստատած Բիայնիլի-Ուրարտուի և ժամանակաշրջանի գերիշխող ուժի՝ Ասորեստանի վերելքով այդ նույն դարի առաջին կեսին: Ք.ա. 7-րդ դ-ը համարվում է նաև մարական պետության կազմավորման և վերելքի շրջան: Այս թվացյալ վերընթաց զարգացումներին հակառակ՝ այդ նույն դարի երկրոր կեսին՝ անսպասելիորեն կարճ ժամանակահատվածում, ականատես ենք լինում լեռնաշխարհն ու ողջ Առաջավոր Ասիան համակած քաղաքական անկայունության և խորը ճգնաժամի դրսևորումների, էթնիկական տեղաշարժերի, որոնց հաջորդում է հինառաջավորասիական տիպի պետական կառույցների համատարած փլուզումը: Ընդամենը մի քանի տասնամյակ անց՝ Ք.ա. 7-րդ դ-ի վերջերին, այս երկրներն այլևս գոյություն չունեին:

Ներկայացված ատենախոսության հեղինակը խնդիր է դնում պարզելու առաջավորասիական տարածաշրջան ներթափանցած էթնիկական նոր խմբերի՝ կիմմերների և սկյութների դերակատարությունը վերը նշված գործընթացներում՝ տարաբնույթ գրավոր սկզբնաղբյուրների և հնագիտական նյութի լայն ներառմամբ: Ատենախոսի նպատակն է վեր հանել նրանց ներկայության վկայությունները հատկապես Հայկական լեռնաշխարհի արևելքում, մի գոտի, որը սերտորեն կապված էր հյուսիսկովկասյան տարածաշրջանի հետ և բազմիցս ականատես է եղել էթնիկական տարբեր խմբերի ներթափանցումների:

Ատենախոսության թեման արդիական է և խիստ կարևոր, այդ թվում կամ հատկապես՝ հայ ժողովրդի պատմության բավական հետաքրքիր, միաժամանակ՝ խիստ վիճահա-

ռույց դարաշրջանի պատմության հարցերը պարզաբանելու տեսանկյունից: Մենք առիթ ունեցել ենք նշելու, որ տարաբնույթ նոր տվյալները ստիպում են վերարժեվորել ինչպես Վանի թագավորության անկման, այնպես էլ՝ հայ-մարական և հայ-սկյութական փոխհարաբերությունների մասին մինչ այժմ շրջանառվող աղբյուրների տվյալները: Մեր խորին համոզմամբ՝ Հայաստանի՝ Ք.ա. 7-6-րդ դդ-ի պատմության, պայմանական ասած «անցումային» (իմա՝ հետ-ուրարտական – մինչաքեմենյան կամ Երվանդական) շրջանը հասկանալու խնդիրը դեռևս լուծված չէ: Իսկ Գարեգին Թումանյանի դոկտորական ատենախոսությունը միանշանակ կարող ենք դիտարկել որպես այդ խնդրի լուծմանն ուղղված կարևոր քայլ: Այս առումով կարող ենք փաստել, որ ներկայացված աշխատանքը թեմային վերաբերող առկա ուսումնասիրությունների մեխանիկական միահյուսում չէ. հեղինակի ձեռագիրը երևում է ամենուր, իսկ տեքստը հագեցած է սեփական եզրակացություններով, առաջարկվել են հետաքրքիր լուծումներ, ինչպես, օրինակ, հյուսիսի տափաստանային, շարժունակ հասարակություններին բնորոշ կենդանվարության, թաղման կառույցների և ծիսակարգի, զինվածության և այլ հատկանիշների վերհանումն ու այդ կտրվածքով հայաստանյան կամ գլխավորապես հայաստանյան հնագիտական նյութի մանրակրկիտ դիտարկումը: Ատենախոսությանը կից հավելվածները, մանրակրկիտ կազմված աղյուսակները դրա վկայությունն են: Առավել ևս, ատենախոսը ոչ միայն քաջածանոթ է բնագավառին, այլև ունի դաշտային աշխատանքի հսկայական փորձ: Կարծում ենք, որ իրոք կատարվել է տքնաջան, արդյունավետ աշխատանք:

Միաժամանակ, անհրաժեշտ ենք գտնում ատենախոսի ուշադրությունը հրավիրել, կարելի է ասել՝ սեպագրագիտական/նեղ-մասնագիտական մի քանի դիտարկումների վրա, որոնք կարող են օգտակար լինել հեղինակին մինչև ատենախոսության հրատարակությունը՝ այն լրամշակելու ժամանակ:

1. Դեռևս «Ներածության» մեջ, խնդրին վերաբերող գրականությունը քննարկելիս, ատենախոսն իրավացիորեն մեծ տեղ է հատկացնում կիմմերական և սկյութական մշակույթների, բայց հատկապես առաջինի բնութագրական տարրերի բացահայտմանը: Այս հարցը դեռևս իր վերջնական լուծումը չի ստացել: Մասնավորապես, հյուսիսսև-

ծովյան հնագիտական երկու՝ Չերնոգորովկյան (Ք.ա. մոտ 900-750 թթ.) և Նովոչերկասսկյան մշակույթները (Ք.ա. մոտ 750-700 թթ.), որոնցից առաջինը դիտարկվում էր իբրև «նախասկյութական» և, ըստ այդմ, «կիմմերական», այլևս լայն ընդունելություն չի գտնում և երկու մշակույթներն էլ ընդունվում են իբրև սկյութական: Հակիրճ լինելու համար ասենք, որ զուտ կիմմերական հնագիտական հուշարձաններ, եթե անկեղծ լինենք, հայտնի չեն և ըստ էության թե՛ կիմմերները, և թե՛ սկյութները միևնույն՝ «սկյութական» մշակույթի կրողներն էին: Այդ միտքը, համապատասխան հղումներով, արտահայտվում է նաև ատենախոսության առանձին էջերում: Եթե այդպես է, ապա որքանով է տեղին «կիմմերա-սկյութական» եզրի կիրառությունն ընդհանրապես՝ «սկյութական»-ի փոխարեն: Դա, կարծում ենք, ավելի շուտ տուրք է ավանդույթներին, քան արտացոլում է արդի իրողությունները:

2. Այդ նույնը վերաբերում է կիմմերներին, երբ վերջիններիս դիտարկվում ենք իբրև առանձին էթնիկական խումբ: Նախ նշենք, որ հույն հեղինակները, որոնց տեղեկություններն ընկած էին հետագա պատմագիտության հիմքում, խիստ աղոտ պատկերացում ունեին կիմմերների մասին: «Ոդիսական»-ում Հոմերոսը կիմմերներին ներկայացնում էր իբրև երկիրը շրջապատող Օվկիանոսի այն ափին ապրող ցեղերի, որոնք զուրկ էին անգամ արևի լույսից և որից անդին գտնվում էր Հադեսի խավար թագավորությունը: Այս պատկերը մեծ ազդեցություն է ունեցել հետագա հեղինակների վրա, երբ վերջիններս անդրադառձել են կիմմերներին: «Ոդիսական»-ի ազդեցությամբ է, որ կիմմերների երկիրը հին հույները տեղորոշում էին Ապենինյան թերակղզու հարավում՝ Կամպանիայում, քանի որ այստեղ գտնվող Ավերնոյի լիճը համարվում էր Անդրաշխարհի տանող ուղիներից մեկը: Այս նույն տրամաբանությամբ է, որ կիմմերները, ելնելով նաև անվանական նմանությունից, նույնացվել են գերմանական կիմբրների ցեղի հետ (Պոսիդոնիոս, Ստրաբոն, Դիոդորոս Սիկիլիացի, Պլուտարխոս): Փաստորեն, կիմմերների որոնումներն արևմուտքում կապված էին «Ոդիսական»-ի աշխարհագրության հետ, իսկ հին հույները Ոդիսևսի դեգերումները տեսնում էին արևմտամիջերկրածովյան ավազանի ծովերում, բայց ոչ երբեք Սև ծովում: Կիմմերների՝ սևծովյան տափաստաններում բնակվելու ավանդույթը իրականում ևս

առասպելածին է, և ամենայն հավանականությամբ գործ ունենք վերը նշված առասպելի երկրորդական տեղայնացման հետ, այն ժամանակ, երբ սնծովյան ափերը սկսեցին գաղութացվել հույների կողմից: Պայմանական ասած «սնծովյան կիմմերներ»-ի մասին առաջինը հայտնում է Արիստեաս Պրոկոննեսցին (Ք.ա. 7/6-րդ դ.) իր «Արիմասպեա» պոեմում՝ նշելով կիմմերներին վտարող սկյութների մասին պատմությունը: Նրան հետագայում կրկնում է պատմահայր Հերոդոտոսը, ապա և այլ պատմիչներ: Արդյունքում, սնծովյան ափերը գաղութացնող հույները տեղում գտնվող կառույցները (օրինակ՝ դամբանաթմբերը) սկսում են վերագրել կիմմերներին, ի հայտ են գալիս այսպես կոչված «կիմմերական» տեղանուններ և այլն: Հետագա, արդեն 20-րդ դ-ի հետազոտողները այս տվյալներն ընդունում էին աներկբա, ինչի արդյունքում արմատավորվում է կիմմերների՝ հյուսիսսնծովյան հայրենիքի և կիմմերական մշակույթի մասին տեսակետները: Փորձ արվեց դա հաստատել նաև հնագիտորեն՝ կիմմերներին վերագրելով, ինչպես վերը նշվեց, Ք.ա. 9-ից 8-րդ դ-ի կեսերով թվագրվող Չերնոգորովկյան կամ «նախասկյութական» մշակույթը: Այստեղ պետք է նկատի ունենալ, որ հյուսիս-սնծովյան տարածքները, Դնեստրի ստորին ավազանը Ք.ա. 10-րդ դ-ում ըստ էության եղել է անբնակ կամ ունեցել է խիստ սակավաթիվ բնակչություն, իսկ այդ տարածքների բնակեցումը կապվում է Ք.ա. 9-րդ դ-ում արևելաեվրասիական տափաստաններից դեպի արևմուտք սկյութների տեղաշարժերի հետ (տես, օրինակ, Սերգեյ Տոխտասևի, Վիկտոր Կլոչկոյի և այլոց աշխատանքները): Ըստ այդմ, նրանց է վերագրվում նաև վերը նշված Չերնոգորովկյան մշակույթը: Այսինքն, փաստացի գործ ունենք մեկ՝ սկյութական մշակույթի հետ: Ըստ այդմ, հարց է ծագում՝ արդյո՞ք կիմմերները պարզապես սկյութական ցեղախումբ չէին: Այդ մասին կարող են վկայել նաև կիմմերական առաջնորդների անունները (Թեուշպա, Թուկդամմի/Դուգդամմի, Սանդակուրրու կամ Սանդաքշատրու), որոնց իրանական ստուգաբանությունը, թեև ոչ վերջնական, բայց հնարավոր է թվում (տես Թալկվիստի, Մարկվարտի, Դյակոնովի, Մայրհոֆերի և այլոց աշխատանքները): Այդ նույնը վերաբերում է նաև հենց «կիմմեր» անվանմանը, որը Իգոր Դյակոնովը բխեցնում էր իրանական **gāmīra- / gmīra-*, բառից. այն ունի մոտավորապես «շարժունակ

խումբ/միավոր» իմաստը: Ի դեպ, պատահական չէ, որ կիմմերական առաջնորդնե-րից Թուկդամմին միաժամանակ համարվում է սակերի (իմա՝ սկյութների) առաջ-նորդ: Կարծում ենք, որ այս առումով ատենախոսի ուշադրությունից վրիպել է մի կարևոր փաստ: Դարեհ I-ի Բեհիստունի հայտնի արձանագրության մեջ՝ հին պարս-կական տեքստում սկյութների (*saka*) անվան դիմաց աքքադական (բաբելոնյան) տեքստը նշում է «կիմմերներ» (g*imi(r)ri*) անվանումը: Այն, որ սկյութերին (սակե-րին)՝ սկսած հյուսիսսևծովյան ափերից մինչև Կենտրոնական Ասիա, բաբելոնյան սեպագիր տեքստերն անվանել են կիմմերներ, առաջին անգամ նշվել է Մուհամմեդ Դանդամաևի կողմից դեռևս 1977 թ-ին հրատարակված մի հոդվածում: Ի դեպ, զար-մանալիորեն Մ. Դանդամաևի աշխատանքները դուրս են մնացել աատենախոսի ուշադրությունից:

3. Ատենախոսը կասկածի տակ է առնում սկյութական մշակույթը կրող կիմմերների էթնիկական պատկանելությունը այդ նույն խմբին (էջ 52): Այստեղ հարկ է ճշտել, թե ինչ նկատի ունի հեղինակը «էթնիկական պատկանելություն» ասելով: Մենք դա կա-րող ենք հասկանալ որպես այլ լեզվի կրող, բայց կարծում ենք, որ «կիմերերեն»-ի որոնումներն այս պահին անօգուտ գործ է: Ավելին, կիմմերների՝ սկյութներից առանձին էթնիկական խումբ կամ լեզվի կրող դիտարկումը հղի է հարցի քաղաքա-կանացմամբ, օրինակ, տեղիք տալով նրանց՝ թյուրքական ծագման վարկածի ծավալմանը, ինչը լայնորեն շրջանառվում է հատկապես վերջին տարիներին Թուր-քիայում հրատարակված աշխատանքներում, իսկ կիմմերները դիտարկվում են իբրև Փոքր Ասիա ներթափանցած «առաջին թյուրքեր»: Իսկ եթե կիմմերները խոսել են սկյութական ինչ-որ բարբառով, ապա դրանով նրանք չեն դադարում լինել սկյութներ: Սա է հիմնական խնդիրը, որի վրա մենք հրավիրում ենք ատենախոսի ուշադրությունը, հետագայում՝ աշխատանքը հրատարակության պատրաստելիս, առավել մանրամասն քննարկում տեսնելու ակնկալիքով:

Այլ դիտարկումներ և առաջարկներ

4. Կարծում ենք, որ ընդհանուր առմամբ ատենախոսության հեղինակը շատ է վստահում անտիկ հեղինակների (և ոչ միայն նրանց) հաղորդումներին: Նշենք մի քանի օրինակ: Ատենախոսության 20-րդ էջում նշվում է Ք.ա. 675 թ-ին կիմմերների դեմ պատերազմում Փռյուգիայի արքա Միդասի (հեղինակի մոտ՝ Միդաս I) զոհվելու կամ կիմմերներին պարտվելուց հետո ինքնասպանություն գործելու մասին: Այս մասին են հայտնում Ստրաբոնը, Հուլիոս Աֆրիկացին և Եվսեբիոս Կեսարացին: Ընդ որում, այս տեղեկության վրա հենվելով էին հետագա ուսումնասիրողները թվագրում Փռյուգիայի մայրաքաղաք Գորդիոնի (ներկայիս Յասսըհյոյուք հնավայրը կենտրոնական Թուրքիայում) ավերումը Ք.ա. մոտ 700 թ-ով՝ դրա պատասխանատու դիտելով կիմմերներին: Այստեղ նկատենք, որ ասորեստանյան արքա Ասսարհադդոնի գահակալության օրոք կազմված, Արևի աստված Շամաշին ուղղված գուշակային տեքստերից մեկում (State Archives of Assyria 4, no. 1, l. 4), որը թվագրվում է հենց Ք.ա. 675 թ-ով, ուղղակի ասվում է, որ, կիմմերական զորքերը Փռյուգիայի արքայի դաշնակիցներն են: Այս փաստը թույլ է տալիս կասկածանքով մոտենալու անտիկ հեղինակների հաղորդումներին: Ինչ վերաբերում է Գորդիոնի ավերմանը, ապա դա հազիվ թե կարելի է կապել կիմմերների հետ, քանի որ այն տեղի է ունեցել գրեթե հարյուր տարի ավելի վաղ՝ Ք.ա. մոտ 800 թ-ին, ինչը հաստատվում է նաև ռադիոածխածնային տվյալներով:
5. Ատենախոսության՝ պատմական ժամանակաշրջանի վերակազմությանը նվիրված հատվածներում հեղինակը մեծ տեղ է տալիս, մի կողմից, ուրարտական արձանագրություններից մեկում հիշատակված Շագապուտարայի և հայկական աղբյուրներից հայտնի Սկայորդու նույնականացմանը, իսկ մյուս կողմից՝ Շագապուտարա/Սկայորդուն նույնացնում է ասորեստանյան աղբյուրներում որպես սկյութների առաջնորդ հանդես եկող Իշպակայի հետ (տես էջ 24-26 և այլուր): Միանգամայն հավանական համարելով Շագապուտարա – Սկայորդի նույնականացումը, գտնում ենք, որ փոխարենը խնդրահարույց է նրա և սկյութների առաջնորդ Իշպակայի նույնացումը: Նախ, տարբեր են առաջնորդների անունները, և անհասկանալի է մնում, թե ինչո՞ւ են նույն առաջնորդին ուրարտացիները ճանաչել մի անունով,

ասորեստանցիները՝ մեկ այլ: Նման երկրորդ օրինակ մեզ հայտնի չէ: Բացի դա, Իշպակային վերաբերող ասորեստանյան տեքստը հղելիս ատենախոսության հեղինակը հենվում է սկզբնաղբյուրի՝ Իգոր Դյակոնովի կողմից արված հրատարակության վրա, ըստ որի, ասորեստանյան արքա Ասսարհադդոնը կոտորել է սկյութ Իշպակայի զորքը: Պետք է հաշվի առնել, որ այդ արձանագրությունը միակը չէ, որը տեղեկացնում է սկյութներին հաղթելու մասին: Այժմ հայտնի է նման չորս արձանագրություն: Ընդ որում, դրանցից երկուսում Ասսարհադդոնը հայտնում է, որ նա դաշույնով/սրով սպանել է Իշպակային և շեշտում, որ մաննացիների դաշնակից Իշպական չկարողացավ փրկել անգամ ինքն իրեն: Սա վերաբերում է Ք.ա. 678 կամ 675 թ-ին: Բազմիցս շեշտելով Շագապուտարայի և Իշպակայի նույնականացումը՝ էջ 44-ում հեղինակը, որպես փաստարկ նշում է, որ նույնն է նաև նրանց գործունեության ժամանակը: Մենք նման վստահություն չունենք: Իհարկե, Արգիշթիի որդի Ռուսան ասորեստանյան արքա Ասսարհադդոնի ժամանակակիցն էր, բայց միաժամանակ չմոռանանք, որ նա կառավարել է կամ առնվազն նրան է վերագրվում շուրջ 40-ամյա կառավարման շրջան և չկա որևէ կռվան, որը թույլ կտա պնդելու, որ Շագապուտարային հիշատակող ուրարտական տեքստը գրվել է Ռուսայի կառավարման հենց սկզբնական տարիներին: Հետևաբար, չի բացառվում, որ գործ ունենք սկյութական տարբեր խմբերի առաջնորդների հետ:

6. Չենք կիսում հեղինակի այն տեսակետը, որ Հայկական լեռնաշխարհի հարավ-արևմուտքը Ք.ա. 681 թ-ին գտնվում էր Իշպակայի ազդեցության ոլորտում (էջ 44-45): Վերստին նկատենք, որ Իշպական ասորեստանյան աղբյուրներում հանդես է գալիս միմիայն իբրև մանացիների դաշնակից, այն էլ՝ միևնույն դրվագում: Մանացիների երկրի տեղորոշումը քաջ հայտնի է՝ Ուրմիա լճից հարավ և հարավ-արևելք, իսկ Հայկական լեռնաշխարհի հարավ-արևմուտքում Իշպակայի գործունեության հետ կապված որևէ վկայություն առկա չէ: Ավելին, այդ տարածքում էր գտնվում Շուբրիայի թագավորությունը, որի արքաների գործունեությունը ևս ոչ մի կերպ չի կապվում սկյութների հետ: Կարծում ենք, որ ճիշտ չէ պատմական վերակազմություններում հենվել միմիայն մեկ, տվյալ դեպքում՝ վաղ հայկական աղբյուրների վրա:

7. Ատենախոսության 43-րդ էջում, հղելով Էդվին Գրանտովսկուն, հեղինակը սկյութների առաջնորդ Իշպակայի անունը կապում է «ձիավոր» (*aspaka*) բառի հետ: Դա վիճելի է, և քանի որ ատենախոսն անդրադառնում է նաև առաջնորդների անունների ստուգաբանությանը, ապա ցանկալի կլիներ, որ ներկայացվեին նաև մյուս կարծիքները: Ամփոփ նշենք, որ հետազոտողներն առավել հավանական են համարում Իշպակա անձնանվան ստուգաբանությունը «շուն» (**spaka*) բառից (մարերեն), հմմտ. այստեղ նաև միջին պարսկերենի *sag*՝ «շուն» բառը: Իսկ սկյութները, ինչպես հայտնի է, ուրարտական և հայկական աղբյուրներում հանդես են գալիս «սակ» անունով: Նկատենք նաև, որ ասորեստանյան աղբյուրներում հիշատակվող իրանական բոլոր անձնանունները, որոնք կապվում են «ձի» (*aspa*) բառի հետ, գրվել են այնպես, ինչպես հնչել են (տես, օրինակ, Ašpabara, բառացի՝ «ձիավոր, հեծյալ» անձնանունը):
8. Եթե ելնում ենք Շագապուտարա – Սկայորդի – Իշպակա նույնացումից, ապա կարող է հարց առաջանալ, թե արդյո՞ք Իշպակա-Սկայորդու զոհվելու մասին վերը նշված հաղորդումը հակասության մեջ չի մտնում հայկական աղբյուրների հետ: Եթե Իշպակա-Սկայորդին Պարույրի հայրն էր, ապա այդ դեպքում Պարույրը, ով մարերի հետ մասնակցել էր Ասորեստանի կործանմանը, ուրեմն, այդ ժամանակ պետք է լիներ առնվազն 70-ամյա ծերունի: Եթե Պարտատուան Պարույրն է, հետևաբար նաև Հերոդոտոսի հիշած Պրոտոթիոսը, ինչը ընդունում է նաև հեղինակը և նրա կառավորումը թվագրում Ք.ա. 678-653/652 թթ-ով (էջ 45), ապա ով էր, այդ դեպքում, Պարտատուային հաջորդած Մադիոսը, ով իշխել է Ք.ա. 653/652-625 թթ.: Ատենախոսն իհարկե նշում է, որ Մադիոսը Պարտատուայի որդին էր և նրան նույնացնում է նաև Նյուքար Մադեսի հետ: Սակայն, այդ փաստը հակասության մեջ է մտնում հայկական աղբյուրների հետ, որոնց համաձայն, ինչպես վերը նշվեց, Պարույրը դեռևս ողջ էր Ք.ա. 600-ական թթ-ի վերջերին և անգամ մասնակցում էր մարերի արշավանքներին ընդդեմ Ասորեստանի (էջ 45-46 և այլուր):
9. Կարծում ենք, որ հեղինակը երբեմն ցույց է տալիս զգայական մոտեցում, օրինակ, երբ նշում է Ասորեստանը փրկելու Պարույր-Պարտատուայի՝ ժամանակավոր արդյունք տված կամ Մադիոսի՝ զուր անցած ջանքերի մասին (էջ 47): Մեր խորին հա-

մոզմամբ՝ պատմագիտության մեջ գերագնահատվել է և դեռևս շարունակվում է գերագնահատվել սկյութների դերակատարությունը Ք.ա. 7-րդ դ-ի ռազմաքաղաքական իրադարձություններում: Նկատենք, որ Ասորեստանը սկյութների գործունեության շրջանում ի զորու գտնվեց ապրելու տարածքային իր ամենամեծ աճը՝ գրավելով Եգիպտոսը և հասնելով մինչև Քուշի թագավորություն (իմա՝ Եթովպիա), գրավելով, ապա և վերագրավելով Բաբելոնիան, գրավելով և կազմալուծելով Էլամական համադաշնությունը հարավ – հարավ-արևմտյան Իրանական բարձրավանդակում և այլն: Հետաքրքիր է, որ այդ բոլոր արշավանքները պատկերող բարձրաքանդակներում ասորեստանյան բանակի կազմում երբևէ սկյութներ/կիմմերներ չեն պատկերվում, իսկ, օրինակ, փոքրասիական հոնիացի ծանրազեն հոպլիտներ պատկերվում են: Այս առումով նկատենք, որ երբ ասորեստանյան տեքստերից մեկում նշվում է կիմմերական գնդի գոյության մասին՝ հիշատակելով դրա հրամանատարին, ապա դա, դատելով նաև հինարևելյան ու հատկապես հետագա նորբաբելոնյան և աքեմենյան շրջանի տեքստերից, չի նշանակում, որ այդ գունդն անպայման բաղկացած էր կիմմերներից, այլ վերաբերում է կիմմերական զենքով, տվյալ դեպքում՝ կիմմերական նետ-աղեղով զինված լինելուն: Որպես օրինակ կարող ենք նշել նորբաբելոնյան տեքստերը, որոնցում խոսվում է զինվորներին տրված «աքքադական» աղեղների և «կիմմերական» աղեղների մասին, ընդ որում, մեկ «կիմմերական» աղեղին հասնում էր 200 նետ:

10. Ատենախոսը, ասորեստանյան սկզբնաղբյուրներից օգտվելիս, հիմնականում հենվում է 1951 թ-ին Իգոր Դյակոնովի կողմից հրատարակված ժողովածուի վրա (АВИИУ): Ինչ-խոսք, իր ժամանակին հետազոտողների համար իբրև սեղանի գիրք ծառայած այդ հրատարակությունը վաղուց այլևս արդիական չէ, փոխարենը՝ առկա են այդ աղբյուրների ընդհուպ մինչև նորագույն հրատարակություններ: Արդյունքում, ատենախոսության էջերում երբեմն հանդիպում են փաստական անճշտություններ: Օրինակ, 35-36-րդ էջերում, հղելով նշված աղբյուրը, Ք.ա. 681 թ-ի էպոնիմ է համարվում Շարուծուրը, մինչդեռ, այդ տարվա էպոնիմը Նաբու-ախխե-էրեշն էր: Շարուծուր անունով հայտնի են երեք անհատներ, որոնցից և ոչ մեկը էպոնիմ չի եղել

(տես PNA 3/2, p. 1252): Հեղինակը, թերևս, այստեղ նկատի ունի Մարկասիի նահանգապետ Նաբու-շարր-ուծուրին, ով Ք.ա. 682 թ-ի էպոնիմն էր: Իսկ թե որքանով է նա նույնանում Սինախերիբի կրտսեր որդիներից Նաբու-շարր-ուծուրի հետ, դժվար է ասել:

11. Թվարկելով Վանի թագավորության ժամանակաշրջանի քաղաքները, ատենախոսը նշում է նաև Էթիունիի Արդին-Արտիմետ քաղաքը՝ այն նույնացնելով Մեծամորի հետ (էջ 14): Նկատենք, որ Արգիշթի I-ի տարեգրության այդ հատվածի ոչ միայն թարգմանությունն է պայմանական, այլև՝ վնասված հատվածի վերակազմությունը: Իսկ տեքստը, մեր կարծիքով, վերաբերում է ոչ թե Էթիունյան Արդինիին, այլ «Էթիունցու» (այն է՝ Էթիունիի արքայի) կողմից Արդինի քաղաքի հետ կապված ինչ-որ թշնամական քայլի:
12. Դժվարանում ենք ասել, թե որքանով է նպատակահարմար հայ-սկյութական լեզվական փոխառնչությունների խնդրին անդրադառնալը (էջ 214-216 և այլուր), առավել ևս, երբ ատենախոսն ինքն է նշում, հղելով Գևորգ Ջահուկյանին, որ թե՛ հայերենում, և թե՛ սկյութերենում բառային զուգադիպումները կարող են ուղղակի փոխազդեցությունների արդյունք չլինել: Նշենք, որ առկա է ընդարձակ, գերազանցապես՝ օտարալեզու գրականություն, որոնց հետ ծանոթությունը, վստահաբար, շտկումներ կենթադրեր բերված օրինակներում: Օրինակ, որքանով է հիմնավոր սկյութերեն bala-ի հետ «բոլուկ» բառի համեմատությունը: Հմմտ. դեռևս նախաթյուրքերեն **böl-* «բաժանել, մասնատել» բայը, որից էլ ծագում է **bölük*-ը՝ «մաս, բաժին, խումբ, դաս» իմաստով և այլն:

Այսպիսով, ամփոփելով նշվածը, կարծում ենք, որ ներկայացված դոկտորական ատենախոսությունը գրված է գիտական չափանիշներին համապատասխան, հեղինակը կատարել է մեծածավալ, արդյունավետ աշխատանք՝ հենվելով նաև իր բազմամյա դաշտային աշխատանքների հարուստ փորձի վրա, իսկ մեր նկատառումները հիմնականում առաջարկներ են՝ միտված առավել խթանելու մեզ բորիս հուզող և իրապես խնդրահարույց այն հարցերի քննարկումը, որոնց անդրադարձ է կատարվել սույն ատենախոսության մեջ:

Նշենք նաև, որ ատենախոսության սեղմագիրը համապատասխանում է ներկայացվող պահանջներին:

Եզրափակելով մեր խոսքը՝ գտնում ենք, որ «Կիմերները և սկյութները Հայկական լեռնաշխարհի արևելքում (ըստ հնագիտական տվյալների)» խորագրով դոկտորական ատենախոսության հեղինակ Գարեգին Սահակի Թումանյանը արժանի է իր հայցած պատմական գիտությունների դոկտորի գիտական աստիճանին:

ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի առաջատար
գիտաշխատող, պատմ. գիտ. դոկտոր՝
Ե.Հ. Գրեկյան

ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի առաջատար
գիտաշխատող, պատմ. գիտ. դոկտոր՝
Ե.Հ. Գրեկյան

Ե.Հ. Գրեկյանի ստորագրությունը հաստատում եմ՝
ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի տնօրենի տեղակալ,
պատմական գիտ. թեկնածու՝ Ա. Բորոխյան

31.05.2021թ.